ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՃԺԹ· 1870 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ· — ՓԵՏՐՈՒԱՐ

ԱՅՐԻՆ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆ

(Տես երես 5)

Գերեզմաննոցին մէջ քիչ մ'ատեն ուշացայ. տուն դառնալուս ատեն հանդիպեցայ այն սրգակից կնկան, որ այրի մայրը իր միայնացեալ բնակութիւնը տարեր և ետ կը դառնար, և անկէց քանի մը տեղեկութիւն առի այս սրտաշարժ տեսարանին վրայօք։ Վախճանելոյն ծնողքն իրենց մանկութենէն վեր այս գեղիս մէջ կը բնակէին. հիւղերնին ամենէն կոկիկներէն մէկն էր, և զանազան գեղջկական աշխատութեամբք և պզտի պարտիզի մ'ալ օգնութեամբ բաւական հանգստութեամբ և պատուով կ'ապրէին, երջանիկ և անբամբաս կեանք մ'անցընելով։ Մէկ որդի մը միայն ունէին, որ աճեցաւ 'ի պարծանս և 'ի գաւազան ծերութեան իր ծնողացը։ «Ո՛հ, պարոն, ըսաւ պատուական կնիկն, ինչպէս շնորհալի տղայ մ'էր, ինչպէս քաղցրաբարոյ, ինչպէս մարդավար և բարերար ամենուն, և ինչպէս հլու և սիրող ծնողացը։ Մարդուս սիրտն կը բացուէր՝ երբոր տեսնար զանիկայ, կիրակի օրը իր աղէկուկ զգեստները հագած, այնպէս բարձրահասակ, այնպէս ուժով, այնպէս զուարթ, իր պառաւ մօրը թեւը մտած եկեղեցի տանելով.— վասն զի մայրն ալ աւելի կ'ախորժէր որ Գէորգ իրեն թեւը տայ քան թէ իր էրիկն.— ափսոս, խեղճ մարիկ, իրաւունք ալ ունէր պարծելու անոր վրայ, վասն զի բոլոր գեղիս մէջ անոր նմանն չկար։

Դժբաղդաբար՝ տարի մը երկրագործութիւնն անյաջող երթալով և սովը ըլլալով տղուն փորձութիւն եկաւ ծառայութիւն մտնելու քիչ կարողութիւն ունեցող աղուեստաւորի մը, որ մօտիկ գետոյն եզերքը կ'աշխատէր։ Այս գործողութիւնս մտնելէն քիչ մը ետքը՝ յորդորուեցաւ նաւաստի ժողովողներէ, և մտաւ նաւարկութեան։ Ծնողքն լսեցին որ նաւաստութեան բռնուեր է, բայց անկէ զատ լուր չառին։ Ասկէ մեծ կորուստ չէին կրընար ընել իրենց ապրուստին։ Հայրն որ արդէն հիւանդոտ էր՝ բոլորովին վհատելով և տխրութեամբ տանջուելով՝ գերեզման մտաւ։ Այրին միայնակ մնաց

ցած իր ծերութեան և տկարութեան մէջ՝ չկարնալով ինքզինքը հոգալ՝ ե-կաւ ժողովրդապետին ապաւինեցաւ։ Դեռ գեղին մէջ իր վրայ բարի զգացմունք և յարգութիւն մը կար, որովհետև ամենէն ծերերէն մէկն էր։ Բայց իր տնակը՝ յորում այնքան երջանիկ օրեր անցուցեր էր՝ չկարենալով վարձել, ինքը հոն բնակեցաւ, և միայնակ ու դրեթէ անօգնական կ'ապրէր։ Իր պզտիկ պարտիզին տուած քիչ մը բերքերն իր կենաց պիտոյքը հոգալու գլխաւոր աղբիւրն էին. և դրացիներն էին որ երբեմն երբեմն կը հոգային պարտէզը։ Այս բաներս ինծի իմացընելէն քիչ օր առաջ էր, երբ պառաւն իր կերակրիկին համար քիչ մը բանջարեղէն ժողվելու ատեն, տեսաւ որ հիւղին դուռն՝ որ պարտիզին վրայ կը նայէր՝ յանկարծ բացուեցաւ. օտարական մը ներս մտաւ, և ցաւագին ու վայրենի կերպով մը չորս դի կը նայէր։ Նաւաստւոյ զգեստ հագեր էր. վատուժ և սաստիկ գունատ ու դեղնած, հիւանդութենէ և աշխատանքէ չարչըրկածի կերպարանք մ'ունէր։ Երբ տեսաւ զպառաւը՝ շուտովանոր դարձաւ, բայց քայլերն տկար ու դողդոջուն էին. 'ի ծունկ ընկաւ անոր առջև, և տղու մը պէս սկսաւ լալ ու հեծկլտալ։ Խեղճ պառաւն պաղած ու զարմացած կը նայէր վրան. — « Ա՛հ, մայրիկ, սիրելի մայրս, չե՞ս ճանչնար որդիդ, չես ճանչնար քու խեղճ Գէորգդ »։ — Արդարև իր գեղադիտակ որդւոյն աւերածն էր տեսածն. որ տկարացած վէրքերով, հիւանդութիւնք և օտար երկրի մէջ բանտուելով, վերջապէս կըրցեր էր խանդարեալ մարմնով դառնալ դէպ 'ի հայրենի տունը, իր մանկութեան տեսարանաց մէջ հանդչելու։

Ջեմ կըրնար պատմել այսպիսի հանդիպման մ'ատեն եղածը, յորում ուրախութիւն և տխրութիւն հաւասարապէս խառնուեցան։ Դեռ ողջ էր որդին, որդին տունը դարձաւ. որդին պիտի ապրէր իր ծերութեան օգնական և մխիթարանք ըլլալու։ — Սակայն բնութեան ոյժն սպառած էր որդւոյն մէջ. և եթէ բաղդին հարուածը լմընցընելու համար բան մ'ալ պէտք էր, իր ծնելական հիւղին ամայութիւնն բաւական էր այս բանիս։ Ընկաւ տարածեցաւ այն խշտեկին վրայ՝ յորում իր այրիացեալ մայրն շատանքուն գիշերներ անցուցեր էր, և մէկմ'ալ վեր չելաւ անկէց։ Գեղացիք լսելով որ Գէորգ Սրմրրս դարձեր է, վազեցին ելան զինքը տեսնելու, և իրենց չափին համեմատ ձեռքերնէն եկած օգնութիւն ըրին։ Ինքն անանկ տկար էր՝ որ և ոչ խօսիլ կըրնար, միայն շնորհակալ կ'ըլլար։ Մայրն քովէն չէր հեռանար զինքը հոգալու. որդին ալ չէր ուզեր ուրիշի ձեռքէ դարմանուելու։

Հիւանդութեան մէջ այնպիսի բան մը կայ՝ որ մարդկութեան բոլոր գոռոզութիւնը կը խոնարհեցընէ. սիրտը կը կակղցընէ, և կը դարձընէ, տղայութեան զգացմանց։ Ով որ հիւանդութեամբք և վշտերով տառապած է, նաև իր առաջ գացած հասակին մէջ, ով որ օտար երկրի միայնութեան և ամայութեան մէջ ցաւոց անկողնի վրայ ընկած է, չէ՞ յիշեր զմայրը « որ իր տղայութիւնը հոգացեր է », որ շտկեր է իր գլխին բարձիկը, և իր կաքօտութեանցը օգներ է։ Ո՛հ, մայրենի սիրոյն մէջ անանկ մշտատև խանդաղատանք մը կայ՝ որ սրտին ամեն կիրքերէն ալ անդին կ'անցնի։ Ոչ անձնասիրութիւնն կը պաղեցընէ զայն, ոչ վտանգներն վախցընել կու տան, ոչ անարժանութեամբ կը տկարանայ, ոչ ապերախտութեամբ կը մարի։ Զաւկին համար մայրն ամեն բան կը զոհէ. զանիկայ զուարճացընելու համար՝ ամեն զբօսանք կը հնարէ. անոր համբաւովը կ'ուզէ փառաւորուիլ, անոր յաջողութեամբը ուրախանալ. և եթէ թշուառութեանց հանդիպի որդին՝ կ'ուզէ անոր դժբաղդութեանց մէջ ամենէն սիրելի անձն ըլլալ. եթէ անունն ալ ցնաստի վատահամբաւութեամբ՝ այսպիսի ծանր աղիտից մէջ ալ՝ դեռ կը սիրէ և կը գուրգուրայ որդւոյն վրայ. և եթէ բոլոր աշխարհք ալ ուզէ զանիկայ դուրս ձգել, ինքն բոլոր աշխարհք մը կ'ըլլայ իր որդւոյն։

Մեր խեղճուկ Գէորգ Սըմբրս ալ ի-մացեր էր թէ ինչ է հիւանդ ըլլալն՝ և սփոփանք չգտնալն. միայնակ և 'ի բան-տի ըլլալ՝ և այցելու մը չունենալ։ Ձեր կըրնար դիմանալ որ մայրն հեռանայ իրմէ. և երբ նա քիչ մը մէկ դին դառ-նար՝ ինքն ալ աչուըները անոր ետևէն կը դարձընէր։ Պէտք էր որ մայրն եր-կայն ժամեր քովը նստի, և քնացած ատենն ալ արթուն կենայ։ Երբեմն ջերմնատաղնապ երազէ մը յանկարծ արթընալով տագնապած չորս դի կը նայէր, որ տեսնար մօրը պատկառելի երեսը իր վրայ դարցած. այն ատեն կ'ու-զէր անոր ձեռքը բռնել, իր կուրծքին վրայ դնել և հանգիստ քնանալ տղու մը պէս։ Այս կերպով ալ մեռաւ »։

Այս տառապանաց անզարդ պատ-մութիւնը լսելէս ետև՝ սրտիս առաջին դրդմունքն եղաւ սրգաւորին հիւղը եր-թալ, և դրամական օգնութիւն մ'ընել, և եթէ կարելի է մխիթարանք ալ։ Բայց հարցընելով տեղեկացայ որ բարեսիրտ դեղացիք փութացեր էին այսպիսի առ-թի մէջ ամեն պէտք եղածը հոգալու. և որովհետև աղքատներն ալ աւելի աղէկ գիտեն իրարու ցաւերը մխիթարել՝ ես չհամարձակեցայ մէջ մտնել։

Հետևեալ կիրակի օրն ալ դացի եկե-ղեցին. և մեծ զարմացմամբ տեսայ՝ որ խեղճ պառաւն դայթ 'ի դայթի կու գար իր սովորական տեղը նստելու՝ խորանին աստիճանաց վրայ։ Ջանացեր էր իր որդւոյն համար սգաւորի նշան մ'առ-նուլ. — այս գթոյ խանդաղատանաց և յետին աստիճանի աղքատութեան իրարու հետ մրցանքին պէս՝ սրտառուչ բան չէր կըրնար ըլլալ. — մէկ սև երիզ մը, կամ լաւ ևս ըսել՝ գունաթափ սևցած թաշկինակ մը, և մէկ կամ երկու ասոր նման բաներ էին բոլոր արտաքին նշանք իր ներքին ցաւոցը։ Երբ նայեցայ չորս դին 'ի վերայ պատմական յիշատակ-բանաց, հոյակապ ձեռագործաց, պաղ մարմարիոնի շքաղարդութեանց, որովք մարդկային մեծութիւնն հանդիսապէս կ'ողբայ անցած դացած հպարտութիւնը, և դարձայ այս խեղճ որբեվարիին վրայ՝ որ տարիքով և ցաւերով ճնշած՝ ծռած էր իր Աստուծոյն սեղանին առջև, և բարեպաշտ՝այլ կոտրած սրտով աղօթք-ներ և օրհնութիւններ կը վերընծայէր, ճանչցայ որ այս ստոյգ ցաւոց կենդանի մահարձանն՝ մէկալ ամենէն ալ աւելի արժանաւոր էր։

Պատմեցի անոր դիպուածը ընկերու-թեան մէջ հարուստ անձանց մէկ քա-նիին, և սրտերնին շարժեցաւ. ջանա-ցին անոր վիճակը ըստ կարելւոյն դիւ-բացընելու, և ցաւերը թեթևցընելու։ Բայց ամեն բան՝ դէպ 'ի գերեզմանէն մնացած քանի մը քայլերը դիւրելու հա-մար էր։ Մէկ երկու կիրակի ալ անցնե-լէն վերջը՝ պառաւն ա՛լ չերևցաւ իր սո-վորական տեղը եկեղեցւոյն մէջ. և ես այն կողմերէն հեռանալէս առաջ՝ լսեցի գոհութեան զգացմամբ մը, որ հանդար-տութեամբ իր յետին շունչը շընչեր էր, և գացեր էր միանալու իր սիրելեաց հետ, այն աշխարհին մէջ՝ ուր ոչ ցաւ կ'երևնայ, և ոչ բարեկամք 'ի բարեկա-մաց կը բաժնուին։

ՈՒՈՇ· ԱՅՐՎԻՆ
Washington Irwing

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

—

ՆԱՄԱԿ ՏԱՍՆԵՐՈՐԴ

—

Որովայնի խողովակը

(Տես երես 13)

Կը յուսամ սիրելի օրիորդիկ, թէ հետզհետէ միտքդ աւելի կը լուսաւո-րուի, քանի որ մեր պզտի ճամբորդու-թեան մէջ առաջ կ'երթանք։ Հիմա պիտոր սկըսիս հասկնալ թէ ինչ կեր-պով ուտելիք բերնին մէջ մանրուելով ու լուծուելով, յետոյ ստամոքսին մէջ եփուելով, շաղուելով, տարրալուծուե-լով ու կակուղ և յստակ խիւսի փո-խուելով, արեան հետ խառնուելու յար-